Եւ ի սոյն չաբաթի ի Մուտանիայ որ յեզը ծովու՝ լինէր անդ և կրակ և ոչ բազում տունս այրէր։ Եւ լինէր ի քաղաքս արտաքս ի սալախանայ՝ այրէր տունս երից և չորից։ Այլ և օճախ մի ևս ի մէջ քաղաքիս մարեցին մերձակայքն փութով, զի ընդ ցերեկս էր. յաջ և յահեակ անպակաս ի տեղիս տեղիս։ Այլ և ոչ գտանիւր հաց սղիւ, զի ի տեղիս տեղիս աղքատք ոչ գտանէին, զի վերջն հնոյն էր երաշտ գնաց և ով ոք ունէին՝ պահեցին։ Նորն դեռ ևս ոչ էր և ոչ գայր, և մի մի գային նաւք, վասն որոյ գրով և կարգաւ առնէին, և որք ոչն ունէին ի սկզբանց՝ սպառեալ հատաւ և սղին ոչ կարէին մերձենալ, որոյ սակի և ի փուռ գոցվաւ, և բռնաւորն անմիտ ոչ պակասացուցանէր զտրամն, զի մի ասիցէ երկիր թէ Ի Հայոց զարմէ է և օգնէ աղքին, այլ ծեծէր գանէր և ոմանք փախչէին և չդիմանային, և ապա ճի տրամ արար զհացն ի մի ըստակ։

Ցաւուրս լու լինէր թէ ի Պաղտատ Մուրթազան կռուեալ ընդ եէնկիչէրիս մեծամեծացն։ Նա՛ և լու լինէր թէ Սէյիտն բազում յաղթութիւն առնէ ի Մաճար, զճիւանն սպանանէ և ի մեծ պարոնն յուսացեալ յառաջադէմն՝ զՐագովցա օղլին խոցեալ ի ճակատի ի մէջ պատերազմին, և ձի հասուցեալ փախեաւ յետս և ամրացեալ մեծամեծօք ի բերդն Գոլոժվար։ Եւ հասին ի վերայ զօրքն Տաճկաց, զառ և զաւար առին զբանակին Մաճարաց և ընդ թաթար խանին կոխան առին ժե աւուր ճանապարհ զվանս և զեկեղեցիս, զգիւղս և զգիւղաքաղաքս քանդեցին, կործանեց[ին։] Եւ ուր ամրոցք էին մեծամեծ՝ բերդացիք ի ներքս մաճարի միաբանեալ՝ զկեսառ Ռագովցա որդոյն զՔիմիանուշ եղին գռալ իւրեանց։ Ինկ ի միւսում ամին յորժամ գնաց Ալի փաշայ, եմուտ թա-